

361
Հ-20

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵԴԻ

ՆՊԱՍԱՄԱՏՈՅՑ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ



361
Հ-20

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ, ՊՈԻՇԿԻՆՍԿԻ ՓՈՂՈՑ № 3.

1908

361
2-20

uf

370
4309-86



MAR 2010

ՀԱՄԱՌՈՑ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՆՈՐ-ԲԱՅԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՊԸՏՏԵՄԵՏՈՅՑ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵՆՆ.

Դեռ 1907 թվի կանաչադարձ գարունն էր... Նոր-Բայապետ գավառի գիւղացին լի էր հազար ու մի կարմիր յոյսերով: Անուրջներին մէջ նա տեսնում էր իր ամբարները լի ցորենով ու գարով, մարազը՝ խոտով ու դարմանով: Իր սիրասուն գաւաղների տարւայ պարէնը լիառատ էր երազում և զոհ սրտով դուրգուրում ու փայփայում նրանց: Սակայն այս երազները չ'իրականացան դժբախտաբար:

Երջանկութեան այդ օրերին, մի չարագուշակ սևաթոյր ամպ ելաւ, բարձրացաւ Գեղամայ փառապանծ լեռների վրայից, մեծացաւ, ուռաւ, մթնագնեց գեղաբլուրներից ջինջ երկինքը, պայթեց և գիւղացու փայփայած երազները մի բոլորում սոսկալի հեղեղի զոհ դարձրեց: Դեռ չէին անցել հեղեղի սարսափները, դեռ գիւղացին ուշքի չէր եկել, դեռ չէին անհետացել գիւղացու հազարաւոր ծոնրների հետքերը, երբ բնութեան մի աւելի կատաղի արհաւիրք-կարկուտը ջարթեց, փշրեց ու տարաւ հեղեղից գերծմնացածը: Համատարած սովը տիրեց ամենուրեք: Աշխատաւոր գիւղացին ամբողջ տարւայ աշխատանաց որպէս տրիտուր տեսաւ իր առաջ աւեր դարձած մի անապատ: Նայեց կարկուտահար, ջրատար խղճուկ արտին, նայեց անողոք երկնքին և լեռնցու սէգ ու հպարտ աչքերից ցայտեցին լքածի ու ընկճածի անդօր արցունքներ:

Հնց... նա լսեց իր յետեից բոկոտն բալիկների, կայտառ սիրունիկների ձայնը...: Առանց մի բառ պատասխանելու, բռնեց նա նրանց ձեռքը և տարաւ քաղաք իր դարդը, իր ցաւը պատմելու բարի մարդկանց, մուրալու հաց խնդրելու:

Եւ շարան-շարան եկան լցւեցին Նոր-Բայապետ քաղաքը բաղցածների բանակները: Եկան պաշարեցին իրենց հոգևոր հօր, Տ. Խորէն - վարդապետի բնակարանը և առանց բառերի նրա առջև աղի արցունք թափեցին: Նոյնպիսի խմբերով դիմում

1004
25751

էին տեղւոյս գաւառապետին և պետական նպաստ խնդրում: Տեսարանը սոսկալի էր: Քաղցածների անտանների գրութիւնը ակներև էր: Միայն քար սրտերը կարող էին անտարբեր գտնուել այս սրտաճմլիկ տեսարանների առաջ: Քաղաքիս փոխանորդ հայր խորէն վարդապետ Մուրադբէգեանի հրաւիրանօք հաւաքեցին քաղաքի գիտակից և սրտացաւ մարդիկ և նորա նախագահութեամբ կազմեցին մի մասնաժողով հետեւեալ անձնաւորութիւններէ: 1) Քաղաքագլուխ Ս. Բատիկեան, 2) Սարքիս ք-նայ Ազարեանց, 3) Հոգաբարձուներ՝ Մ. Ափրիկեան, 4) Հ. Սաչատրեան, 5) Ս. Բունեաթեանց, 6) Գ. Բուզումեանց, 7) Հ. Ա. Տէր-Միքայէլեանց, 8) Աւագ—ուսուցիչ՝ Ն. Հայրապետեանց, 9) Ուսուցիչ՝ Սեփանեանց, 10) Պ. Չալբերանեանց և 11) Վ. Յակովբեանց:

Մասնաժողովը ժողովրդի անտանների գրութիւնը 'ի նկատ առնելով որոշեց ձեռք առնել բոլոր կարելի միջոցները նրանց ծայր կարիքներին ըստ կարի չափու բաւարարութիւն տալու և մեղմացնելու սովի սուր բնաւորութիւնը: Մասնաժողովի համար շատ պարզ էր, որ տեղական միջոցներով անկարելի էր լցնել ահագին կարիքը, ուստի և անմիջապէս իր նախագահի միջոցով դիմում է դրսի օգնութեան: Նախագահը հեռագրերով անմիջապէս դիմում է հայ և ռուս մամուլի զանազան օրգաններին, նկարագրելով սովելոց դրութիւնը և սրտացաւ ու կարող մարդկանց օգնութիւնը հայցելով: Դիմում է նաև Տիփլիսի կենդրոնական նպաստամատոյց յանձնաժողովին, Երևանի թեմակալ գերապատիւ Յովսէփ արքեպիսկոպոսին, բարձրապատիւ Մուշէ, Ներսէս և Զաւէն վարդապետներին, պ. պ. Ա. Վաչեանին, Կ. Սատրսեանին և Պետերբուրգի եկեղեցական խորհրդին:

Մինչ ցնցող լուրերը կը շարժէին բարի մարդկանց սրտերը և օգնութեան ձեռք կը մեկնէին սովելոց, նրանց դրութիւնը օր ըստ օրէ վատթարանում և դժւարանում էր: Վրայ էր հասել լեռնոտ երկրի բքաշունչ աշունը: Գիւղացիք դեռ ամիսներ առաջ ծախել կերել էին տան իրերը, լծկան եղները, կթան կովը, հորթը, մի խօսքով ով ինչ ունէր, միայն թէ մի կտոր սև հաց ունենար իր քաղցը յագցնելու: Շատերը շաբաթներ շարունակ հացի կտոր չէին գնում բերանը և կերակրում էին միայն գետնախնձորով ու զանազան խոտերով: Եւ սորա հետեւանքն այն եղաւ, որ գիւղերում սկսեց մի սարսափելի համաճարակ իր սոսկալի հետեւանքներով: Դա լինդախտ (Цынга или боттэзнь отъ голода) կոչւած հիւանդութիւնն էր, որի մասին գաւառական բժիշկը քանիցս գեկուցել է իր բարձր իշխանութեանը և որի մասին ժամանակին արձանագրել է մամուլի էջերում: Ստեղծուել էր մի այնպիսի դժոխային դրութիւն, որի առաջ չը կարողացաւ հանդուրժել նոյն իսկ ոստիկան պ. Օլիովսկին, որը արձանագրելով իր սովեալներին

արած այցելութիւններից մէկը հետեւեալ խօսքերով է արտայայտում իր ստացած ծանր տպաւորութիւնը: «... видѣлъ воочию тяжелую картину пробудившую во мнѣ слезы безсилія...».

Որքան էլ մեծ չափերով լինէին մասնաւոր նպաստները, այնուամենայնիւ չէին կարող գոհացումն տալ, գոնէ մի զգալի չափով իջեցնել սովի մահասարսուռ թափը, եթէ չը լինէր պետական զանձարանից ստացւած նպաստը: Եւ պետական նպաստը ստանալու գործում բաւական մեծ դեր կատարեց գաւառապետ պ. Ս. Ղորղանեանը: Իր անըդհատ դիմումներով բարձր իշխանութեանը նա ըստ կարելոյն շտապեցրեց նպաստի ստանալը և բարձրացրեց նպաստի քանակը, ճշգրիտ տեղեկութիւններ տալով գիւղացոց կարիքի չափի մասին: Թէ ժողովրդի ցաւը մի աստիճան նա իր սրտին մօտ էր համարում, այդ ամենապերճախօս կերպով ցոյց են տալիս նորա բաղմաթիւ գրութիւնները, ուղղւած իր բարձր իշխանութեանը, որոնք այնքան խիստ տպաւորութիւն էին թողել բարձր իշխանութեան վրայ որ պետական զանձարանից 102044 ռուբլի նպաստ նշանակուեց Նոր-Բայազէդ քաղաքի և մի շարք գիւղերի համար այն ժամանակ, երբ դեռ պետական նպաստի մասին խօսք չկար: Դժբախտաբար մասնաժողովս իրանից անկախ պատճառներով անկարող է այս համառօտ տեղեկագրի մէջ քաղուածօրէն առաջ բերել գաւառապետի գրութիւններից մի քանի պարբերութիւններ, բայց թոյլ է տալիս իրան ասել, որ ժողովրդական մեծ աղէտի ժամանակ գաւառապետ Պ. Ստ. Ղորղանեանը կանգնած էր իր կոչման բարձրութեան վեայ:

Մասնաժողովի կոչին արձագանք տւաւ հայ ժողովուրդը և զանազան տեղերից եղան առատ նւիրաբերութիւններ: Չը զլացան նաև շատ բանւորներ իրենց լուծմաները ուղարկելու իրենց եղբայրների ու քոյրերի արցունքները գէթ մի օրով ցամքեցնելու համար:

Տիփլիսի կենդրոնական նպաստամատոյց յանձնաժողովի առատ նւիրաբերութիւնից և պ. Ա. Վաչեանցի մի վագոն ալիւրը ստանալուց յետոյ մասնաժողովը հնարաւորութիւն ունեցաւ աւելի ակտիւ գործունէութեան դիմելու: Այնուհետև արդէն մասնաժողովի անդամները օր ու գիշեր դադար ու հանգիստ չ'իմացան:

Պէտք էր քաղաքի, Ղշլաղ և Նորադուղ գիւղերի սովեալների տները մի առ մի շրջել, 'ի մօտոյ ծանօթանալ, իմանալ նրանց կարիքի չափը, ցուցակագրել, ներկայացնել ժողովին և լիազօրութիւն ստանալով ալիւր բաժանել նրանց: Հեշտ բան չէր այս, վերահաս ձմեռայ ցուրտ ու բուք օրերին, երբ շատ-շատերը իրենց տաք տաք սենեակներից անգամ չէին ցանկանալ դուրս գալ: Այս դժբախտ այցելութիւնների ժամանակ սակաւ անգամ չի պատահել, որ մասնաժողովի անդամները տեսած սիրտ կտրատող պատկերների առաջ չը դիմանալով, արտասուել ու դուրս են եկել

սովեակներն անշուք, դատարկ ու ցուրտ խրճիթներն իրենց հոգում տանելով այնպիսի տանջանքների և սոսկալի այնպիսի յուշեր, որոնց ժահրոտ մտապատկերները դեռ երկամբ տարիներ կը մնան նրանց հոգեկան աշխարհում: Բայց գիտակցելով հասարակական անաչառ և անձնուրաց, գործչի վեհ կոչումը, նրանք անմոռն իրարմով տարան իրանց վրայ դրած ծանր խաչը:

Նոր-Բայազէզի գաւառը սովի առթիւ պետական նպաստ ստացաւ 170,000 ռ., իսկ մասնաւոր նպաստներ մօտ 10,000 ռ., որը բաշխեց սովեակներին մասնաժողովի միջոցով: Թէպէտ մասնաժողովիս բաժանած գումարը պետական նպաստի շատ չնչին մասն է կազմում, բայց տւած արդիւնքը, նորա նշանակութիւնը նորանով է մեծ ու առաւել, որ մինչև պետական նպաստի հարցը ձեռնուէր բարձր շրջաններում, այստեղ գիւղացիք սովամահութեան շէմքին էին կանգնած և տագնապի այդ օրերին քաղցի ու սովի մէջ հեծող անօգնական հայ գիւղացու դատարկ խրճիթի դուռը առաջին բացողը մասնաժողովս եղաւ օգնութեան նախնական միջոցը իր ձեռքին բռնած: Եւ շնորհիւ մասնաժողովիս ձեռք առած նախնակալ միջոցների գիւղացիութիւնը կարողացաւ իր գոյութիւնը պահպանել, մինչև պետական նպաստի ստանալը: Եւ այժմ, երբ մասնաժողովս սպառել է իր տրամադրութեան տակ գտնւած գումարները, իր բարոյական պարտքն է համարում մի համառօտ տեղեկագրով հաշիւ տալ լայն հասարակութեանը, թէ իր վրայ դրւած պարտականութեան իրագործման և թէ գումարների բաշխման ձևի մասին:



№№	Ն Ո Ւ Ի Բ Ա Տ Ո Ւ Ն Ե Բ Ի Ա Ն Ո Ւ Ն Ե Բ Ը.	Գումար.	
		Թուր.	Կ.
1	Տփիսիսի կենդրոնական նպաստ. յանձնաժողովից . . .	5000	—
2	Տփիսիսի վարկային ընկերությունից	500	—
3	Աստրախանի հայ հասար., Ն. Վ. Մ.-Թանգեանի միջ.	440	—
4	Վլադիկավկազի հայ հասար. Յ. ք-յ Սառիկեանի միջ. .	600	—
5	«Նոր-Ալիք» և «Վտակ» թերթերի խմբագրություններից	750	—
6	«Մշակ» թերթի խմբագրությունից	598	99
7	«Тифлисский Листок»-ի խմբագրությունից	400	—
8	«Ախուրեան» թերթի խմբագրությունից	78	50
9	Եկատերինոգրադի հայ հասարակ. նոյն հասարակությունից	300	—
10	Բազումբնակ Նոր-Բայազեդ., պ. Մ. Աւետիսեանի միջ.	200	—
11	Ստավրոպոլի հայ հաս. Ս. ք-յ Տ.-Յովհաննիսեանի միջ.	100	—
12	Աղէքսանդրապոլի հայ հաս. պ. Գ. Տաթևեանի միջ. .	71	—
13	Աստրախանի հայ կանանցից տ. Ս. Մկրտումեանի մ. .	107	45
14	Կովկասեան հայոց բարեգործական ընկերությունից . .	135	28
15	Պ. Մնացական խունուցից, ի յիշատակ Ա. Ղուկասեանի	130	—
16	Օրեօլից Նոր-Բայազեդցի սպայ պ. Արտ. Ափրիկեանից .	100	—
17	Պ. Ա. Սարուխանեանից	100	—
18	Յուսիկ արք-եպիսկոպոսից	28	90
19	Երևանի մի խումբ քանդակորենց, Յուսիկ արք-եպիս. միջ.	50	—
20	Գորու հայ կանանցից, օր. Ե. Բաբալեանի միջոցաւ .	23	—
21	Պ. Հ. Ա. Տէր-Միքայելեանից իր հօր յիշատակին . . .	25	—
22	Ռոստովից, պ. Սինանեանի միջոցաւ	21	25
23	Պետրիգորսկից, բժ. Վ. Արծրունու միջոցաւ	102	40
24	Փաստաբան Յ. Ամիրխանեանից	25	—
25	Ուսուցիչ Մ. Սահաթեանից իր մօր յիշատակին . . .	10	—
26	Պ. Մուշեղ Պետրոսեանի հարսանիքին հանգանակած է .	43	70
27	Ձատկական տօների առթիւ հանգան. Նոր-Բայազեդում	104	—
28	պ.պ. Ա. Տ.-Աբրահամեանի և Ս. Փոստոյեանի միջ.	5	—
29	Նոր-Բայազեդի զանձ. կառավ. պ. Մ. Խոջայեանից	6	—
30	Տփիսիսի վաճառական պ. Առաքելեանից	25	—
	Խորէն վարդապետ Մուրադբեգեանից	25	—
	Գումարն է . . .	10080	47

Բացի դրամական նպաստներից ստացւել են նաև իրերով՝

- 1 Մի վագոն ալիւր (750 փ.) պ. Ա. Վաչեանից:
- 2 27 զոյգ տաք կօշիկներ Կովկասեան հայոց բարեգ. ընկերութ.:

№№	Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն.	Գումար.	
		Թուր.	Կ.
1	Գնւած է ալիւր 3967 փ. 36 գր. (զանազան գներով) .	8322	17
2	Վճարւած է ճանապարհածախս Բագլից պ. Ա. Վաչեանցի	316	36
3	ուղարկւած մի վագոն ալիւրի համար	70	48
4	Հեռագիրների և զանազան մանր ծախքեր	47	50
5	Շտեմարանների քրէհ	49	—
6	Վճարւած է ոռճիկ ծառայողներին	205	75
7	Ճանապարհածախս (Մասնաժողովի նախագահին Տփիսիս	70	35
8	և Բագու, անդամներին՝ Սեան և գիւղ. գնալու համ.)	998	86
	Գումարն է . .	10080	47

Ծանոթութիւն.—1. Մասնաժողովը իր տրամադրութեան տակ ունեցել է իր միջոցներով գնած 3967 փ. 36 գր. ալիւր և Բագլից պ. Ա. Վաչեանցի ստացած 750 փ., ընդամենը 4717 փ. 36 գր. որը բաժանւած է հետևեալ ձևով:

1. Նորագույն գիւղին	783	փ. 05	գր.
2. Ղշլաղ	595	» 30	»
3. Վերին և ներքին Ղարանալու գիւղ.	226	» 20	»
4. Քիւսաշի գիւղին	26	» —	»
5. Նոր-Բայազեդ քաղաքին	3086	» 21	»
	4717	փ. 36	գր.

Ծանոթութիւն.—2. Մասնաժողովը ունեցել է իր ամբողջ գործունէութեան ընթացքում 20 նիստ, որոնց արձանագրութեանց մէջ մուծւած են բոլոր նուիրատուների անունները, նաև թէ ու՞մից ո՞րքան և ի՞նչ գնով ալիւր է գնւած:

Ծանոթութիւն.—3. Մասնաժողովի աշխատանքներին որոշ ժամանակ մասնակցել է Տփիսիսի կենդրոնական նպաստամատոյց յանձնաժողովի գործակաւար պ. Ս. Տէր-Պօղոսեանը, որը և իր ներկայութեան ժամանակ մասնակցել է մասնաժողովի բոլոր նիստերին:

Ծանոթութիւն.—4. Մինչև պետական նպաստի բաշխումը մասնաժողովս առանձին ցուցակներով ալիւր էր բաժանում թէ Նոր-Բայազեդում և թէ Նորագույն, Ղշլաղ և այլ գիւղերում, բայց երբ պետական նպաստի բաշխումը սկսուեց ամենաշքաւոր գիւղացիները գալիս էին Նոր-Բայազեդ և ստանում իրանց համար որոշուած նպաստը, այդ պատճառով էլ Նոր-Բայազեդում բաժանուած ալիւրի քանակը համեմատաբար շատ է երեւում:

Ծանոթութիւն.—5. Մասնաժողովը հաւասար չափով ալիւր է բաժանել թէ քաղաքում և թէ գիւղերում բնակւող քրդերին և եաղուբիներին, որոնց բաժանուած է մօտ 400 փութ ալիւր:

Ծանոթութիւն.—6. Բացի սոյն տեղեկագրի մէջ ցոյց տուած գումարներից, Նոր-Բայազեդի սովեակաների օգտին 1907 թ. յունիսին Թիֆլիզի կենդրոնական նպաստամատոյց յանձնաժողովից ստացուել է 5000 ր. որը բաժանուած է Նոր-Բայազեդի ախքատախնամ ընկերութեան միջոցով, որի անդամները եղել են Ս. քահ. Ագարեան, Ստ. Բատրիկեան, Հ. Ուշատրեան, Մ. Աֆրիկեան, Ուշատուր Բունեաթեան, Հ. Տէր-Միքայելեան և Վահրամ Յակովբեան:

Վերջացնելով մեր հաշիւը, պարտք ենք համարում յայտնել մեր շնորհակալութիւնը գաւառապետ պ. Ս. Ղորղանեանին և բժիշկ պ. Զ. Զաքարեանին, որոնք չ'զլացան իրենց ջերմ աջակցութիւնը ցոյց տալու մասնաժողովիս, զանազան ժամանակներում և զանազան միջոցներով: Մասնաժողովը յայտնում է նաև իր խոր և անհուն շնորհակալութիւնը այն բոլոր բարի մարդկանց, որոնք օգնութեան ձեռք մեկնեցին բաղդից մերժածներին և իրենց նուիրաբերութեամբ քանի՜—քանի՜ անմեղ զոհեր խլեցին սովի հուժկու ճիրաններից:

Նոր-Բայազէդի նպատամատոյց մասնաժողովի նախագահ

Խորէն վարդապետ Մուրադբեկեան.

Փոխ-նախագահ ու զանձապահ Սեփան Բասիկեան.

Անդամներ

Սարգիս Բահանայ Ազարեան.
Մասթոս Աճրիկեան.
Հայրապետ Խաչատրեան.
Խաչատուր Բունեաթեան.
Գեորգ Բուդումեան.
Հայկ-Արամ Տէր-Միխայէլեան.
Նիկողայոս Հայրապետեան.
Պետրոս Չալոյրանեան.
Արեակ Սիմանեան.

Անդամ քարտուղար՝ Վահրամ Յակովբեան.



ՀՀ Ազգային գրադարան



NL0227186

42. 870